

– Առէք սոցայ մատանիները՝ բաղդատեցէք սա կնիքներուն հետ եւ տեսէք թէ կա՞յ խարդախութիւն,– գրուցեց Յովնան:

Երբ մատնիներն առնուեցան՝ կնիքները բաղդատուեցան եւ քննող աչքեր ճշգրիտ, հար եւ նման գտան, ցոյց տուին նաեւ ամբաստանեւոց, որ աւելի մեռեալ էին քան կենդանի եւ խօսք չի կար բերանսին: Ան ատեն Յովնան կրկնեց.

– Սոքա ամբաստանեալ են եւ ես դատախագ, մենք այստեղ գործ չունինք, ձեզ կը մնա դատել, հարք եւ վանահայրք Հայաստանեայց Եկեղեցուոյ, իշխանք, դատաւորք եւ գիւղապետք Հայաստան աշխարհի, եթէ արժան կը դատիք եւ արդար համարիք այս երեք մարդիկը, մենք սասնցիքս, թեպէտ արիւն, քրտիկք թափեցինք զիրենք եւ այս վկայաթուղթը ձեռք բերելու, դարձեալ զիրենք կը թողունք արձակ երթալ ի խաղաղութիւն, իսկ եթէ ուրիշ կերպով վճռէք, դարձեալ մեզի պարտք կը համարինք ձեր վճիռը ամենայն ճշտութեամբ մինչեւ վերջին կետը ի գործ դնել:

Եւ ակնարկի ըրաւ դուրս ելան երեք իշխանք եւ ինք իւր սասնցիներով միատեղ:

Տարօնս առաջնորդ եւ նախագահ ժողովքին նստեալ արքեպիսկոպոսը, որ մինչեւ այն րոպէ բերան չէր բացեր.

– Ո՛հ, սարսափելի մարդ է այդ Յովնան,– ըսաւ:

Իսկ ծեր դատաւորը առանց այս բացագանչութեան ուշ դնելու, հվսմառոտեց դատաստանական եղելութիւնքը, եւ մէկկեւմէկիկ հարցուց թէ «Այս երեք անձինքը՝ Մուշեղ Վահեւունի, Վահրամ Տրունի եւ Վահրամ Գնունի թիկնապահը՝ աստուծոյ առաջ եւ արդար խղճով յանցաւոր եւ մատնիչ կը համարեի՞ն իրենց իշխանին եւ դաւաճան հայրենի երկրին ու պատճառ կոտորածի եւ աւերման Վասպուրական աշխարհին». եւ ամենքը երդումով աջերնին Աւետարանին վրայ դրած, ձախը սրտերնուն վրայ խոստովանեցան թէ «Յանցաւոր եւ մատնիչ էին՝ հաւասար ուրացելոցն Մերուժանայ